Ս. ՍԱՐԳԻՍ ՏՈՆԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ 250 ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ

Փետրվարի 15-ին, Ս. Սարգիս զորավարի տոնին, երիտասարդների օրհնության օրվա առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց և իր օրհնությունը տվեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բոլոր թեմերի երիտասարդաց միությունների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀԲԸՄ հովանու ներքո գործող Հայորդյաց տների, Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական Եկեղեցիների երիտասարդական կազմակերպությունների, Երևանի Պետական Համալսարանի շուրջ 250 երիտասարդ ներկայացուցիչների:

«Շատ կարևոր է և էական, որպեսզի երիտասարդները կրթվեն ու դաստիարակվեն քրիստոնեական սուրբ հավատքի վարդապետության ներքո, մեր հայրերի կողմից բանաձևված հավատո սկզբունքներով, մեր եկեղեցական ավանդույթներով ու սովորություններով: ... Եկեղեցու վաղվա օրը սերտորեն շաղկապված է երիտասարդության հետ: Եվ քրիստոնեական դաստիարակությամբ հասակ առած հայ երիտասարդը երաշխիքն է մեր վաղվա բարօր և երջանիկ օրվա»,- նշեց Վեհափառ Հայրապետը՝ շնորհավորելով երիտասարդներին Ս. Սարգսի տոնի առիթով:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը պատասխանեց ներկաների հարցումներին:

Նույն օրը երիտասարդները մասնակցեցին նաև Նորքի Ս. Սարգիս եկեղեցում մատուցված Պատարագի սրբազան արարողությանը, եղան Երևանի Հայորդյաց տներում, ուր իրենց համար կազմակերպվել էին մի շարք գեղարվեստական միջոցառումներ:

Ս. Սարգսի տոնի առիթով այս միջոցառումները կազմակերպվել էին Երևանի Հայորդյաց տների նախաձեռնությամբ և ԵՀԽ Կլոր Սեղանի գրասենյակի աջակցությամբ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ